ԻՆՉՊԵՍ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՐԵԽԱՅԻ ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Արտակարգ իրավիճակներում երեխաները տարբեր աղբյուրներից ստանում են մեծ ծավալի հակասական և անորոշ տեղեկատվություն, ինչի արդյունքում նրանց մոտ կարող են տարաբնույթ հարցեր առաջանալ: Շատ կարևոր է, որ երեխաներին շրջապատող մեծահասակները (ծնողները, ուսուցիչները և այլն) ժամանակ տրամադրեն երեխաների հետ տեղի ունեցածի մասին խոսելու, զրուցելու, նրանց հարցերին պատասխանելու համար: Երբ երեխաների հարցերը անպատասխան են մնում, նրանք սկսում են փնտրել այդ հարցերի պատասխաններն այլ, երբեմն ոչ վստահելի աղբյուրներից կամ էլ սկսում են երևակայել: Մինչդեռ կարևոր է երեխային ցույց տալ, որ հարցեր տալը լրիվ բնական, խրախուսելի է:

Երեխաների հարցերին պատասխանելիս արդյունավետ կլինի ստորև ներկայացվող սկզբունքներով առաջնորդվելը.

- Անպայման արձագանքե՛ք երեխայի հարցին: Անգամ եթե չունեք հարցի պատասխանը, նշեք, թե երբ կկարողանաք խոսել այդ մասին կամ պարզապես ասեք, որ ինքներդ էլ դեռ չգիտեք պատասխանը:
- Պատասխանե՛ք երեխայի հարցերին առանց ավելորդ հուզականության, այն պահին, երբ Դուք գտնվում եք համեմատաբար կայուն հոգեվիճակում: Բնական է, որ դժվար իրավիճակներում երեխան կարող է տեսնել, որ ուսուցիչը հուզված է կամ տխուր, սակայն մեծահասակի ապրումները չպետք է ճնշող լինեն կամ բեռ դառնան երեխայի համար:
- Երբ երեխան հարց է տալիս, նախ պարզե՛ք նրա պատկերացումը տվյալ հարցի մասին (օրինակ՝ «Դու ի՞նչ ես կարծում», «Դու ի՞նչ գիտես այս մասին» և այլն): Սա կօգնի հասկանալ, թե որտեղից է առաջացել հարցը, ինչ տեղեկություն ունի երեխան սրա մասին, ինչն է մտահոգում նրան և այլն:
  Հենց երեխայի արձագանքի հիման վրա էլ կառուցե՛ք հարցին տրվող ձեր պատասխանը:
- Պատասխանե՛ք հարցերին անկեղծ, տվե՛ք միայն վստահելի, հավաստի տեղեկություններ: Ավելի լավ է երեխան իմանա ճշմարիտ, սակայն ոչ այնքան հաճելի լուրը, քան, չիմանալով իրականությունը, հայտնվի անորոշության և խեղաթյուրված իրականության մեջ:
  Երեխաների հետ մի՛ քննարկեք ոչ վստահելի լուրերն ու ասեկոսեները:
- Խոսե՛ք հակիրճ՝ տալով ճշգրիտ և բավարար տեղեկություն: Արտակարգ, բարդ իրավիճակների մասին մանրամասնությունները կարող են ավելորդ լինել երեխաների դեպքում:
- Տվե՛ք պարզ, մատչելի, հասկանալի տեղեկատվություն՝ զերծ մնալով տերմիններ ու բարդ բառեր օգտագործելուց:
- Երեխային տրվող տեղեկատվությունը պետք է համապատասխանի նրա տարիքին և անհատական առանձնահատկություններին:
- Հարցրե՛ք նաև, թե ինչ են ասում նրանց ընկերները, որպեսզի կարողանաք շտկել ցանկացած ապատեղեկատվություն:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

- Օգնե՛ք երեխային հարցին նայել տարբեր տեսանկյուններից, վերլուծել իրավիճակը:
- Պատասխանելիս լավատեսական շեշտադրում արե՛ք և ապահովության զգացում փոխանցե՛ք: Միաժամանակ պետք է զերծ մնալ անիրական խոստումներ տալուից:
- Անգամ եթե երեխան մի քանի անգամ նույն հարցն է կրկնում, համբերատար եղե՛ք և կրկին արձագանքե՛ք. երեխան պարզապես փորձում է ավելի լավ հասկանալ իրավիճակը:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: